Project is co-funded by the European Union

Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային Համագործակցություն (EaPTC)

Eastern Partnership Territorial Cooperation

ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

CROSS-BORDER ECONOMIC DEVELOPMENT

Ուղեցույց

Ինչպե՞ս սկսել բիզնես Հայաստանում և Վրաստանում

german cooperation
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Բովանդակություն

Հայաստան

Բիզնեսի գրանցում 4
Հարկման համակարգ 9
Լիցենզիաներ և թույլտվություններ 15
Առևտուր 18

Վրաստան

Տնտեսվարող սուբյեկտների գրանցում 21
Հարկային համակարգ 25
Արտոնագրեր և թույլտվություններ 28
Առևտրային գործունեություն 29

Բիզնեսի գրանցում

- Գրանցումն իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:
- Իրավաբանական անձի պետական գրանցումը կարող է հաստատվել պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ երկու օրվա ընթացքում:
- Գործում է նաև առցանց գրանցման հարթակ (www.e-register.am):

Գործարար կազմակերպությունների տեսակները Հայաստանում

- Անհատական ձեռնարկություն
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- Բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ և ԲԲԸ)
- Լիակատար ընկերակցություն
- Վստահության վրա հիմված (կոմանդիտային) ընկերակցություն
- Արտադրական կոոպերատիվ

Գրանցման վճարներ

Բիզնեսի տեսակը	Գրանցման գին (ՀՀ դրամ)
Անհատական ձեռնարկություն	3,000
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	0
Բաժնետիրական ընկերություն	0
Լիակատար և վստահության վրա հիմնված ընկերակցություն	0
Արտադրական կոոպերատիվ	0

Ընկերության գրանցման քայլերը

Անհատական ձեռնարկություն. Անհատ ձեռներեցի դիմումին կից ներկայացվում է դիմող անձի անձնագիրը/նույնականացման քարտը և պատճենը, պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (վճարման անդորրագիր կամ վճարում էլեկտրոնային վճարման համակարգով):

Իրավաբանական անձ. Գրանցման դիմումը պետք է ստորագրվի բոլոր մասնակիցների/հիմնադիրների կողմից և ներառի իրավաբանական անձ ստեղծելու մասին վերջիններիս որոշումը, նոր ստեղծվող ընկերության անվանումը, կազմակերպաիրավական ձևը և հասցեն, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր տնօրենի կամ գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի մասին տեղեկություններ (անձնագիր/նույնականացման քարտ):

Օտարերկրյա ընկերության մասնաճյուղի ստեղծում

- Գլխավոր տնօրենի կողմից ստորագրված դիմում, որը ներառում է հիմնադիր ընկերության անվանումը, գրանցման համարը, մասնաճյուղի ղեկավարի տվյալները (ԱԱՀ, անձնագիր/նույնականացման քարտ):
- Մասնաճյուղ կամ ներկայացուցչական գրասենյակ ստեղծելու մասին ընկերության որոշումը, կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև մասնաճյուղի կամ ներկայացուցչական գրասենյակի ղեկավար նշանակելու մասին որոշումները:
- Մասնաճյուղի կամ ներկայացուցչական գրասենյակի կանոնադրությունը՝ հիմնադրի լիազոր ներկայացուցչի ստորագրությամբ:
- Պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Գույքի գրանցում

- Վաճառողը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ) ստանում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների մասին հատուկ տեղեկանք:
- Վճարվում է պետական տուրք և կնքվում է առքուվաճառքի մասին պայմանագիր, որը վավերացվում է նոտարի կողմից:
- ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի տարածքային գրանսենյակում գրանցվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքը, և նոր սեփականատերը ստանում է սեփականության վկայագիր:

Բանկային հաշվի բացում

- Հաշիվ կարող են բացել և տնօրինել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք՝ ՀՀ ազգային դրամով և արտարժույթով:
- Բանկային հաշիվ բացելու համար իրավաբանական անձը պետք է ներկայացնի իր լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրված և կնքված դիմում՝ կից ներկայացնելով պետական գրանցման լիցենզիան (առկայության դեպքում), պետական գրանցման վկայականը և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) հավաստող փաստաթուղթը:

Բնական գազի, էլեկտրաէներգիայի և ջրի մատակարարման ընթացիկ գները Հայաստանում

	Գին (ՀՀ դրամ)՝ փոքր ձեռնարկությունների համար	Գին (ՀՀ դրամ)՝ խոշոր ձեռնարկությունների համար
Բնական գազ (1մ^3)	156	133
	Ցերեկային սակագին (ՀՀ դրամ)	Գիշերային սակագին (ՀՀ դրամ)
Էլեկտրաէներգիա (1 կվտ/ժամ)	48,78	38,78
	Գին (ՀՀ դրամ)՝ փոքր ձեռնարկությունների համար	Գին (ՀՀ դրամ)՝ խոշոր ձեռնարկությունների համար. մեծածախ սակագին
Ջրամատակարարում (1 մ^3)	179,78	51,49

Հարկման համակարգ

Եկամտահարկ (ներառյալ՝ սոցիալական ապահովության վճարներ)

Ամսական հարկվող եկամտի չափ	Հարկի դրույքաչափ
Մինչև 120,000 ՀՀ դրամ	24,4%
120.000 – 2.000.000 ՀՀ դրամ	29.280 ՀՀ դրամ՝ գումարած հարկվող եկամտի 26%-ը
2.000.000 ՀՀ դրամ և ավելի	518.080 ՀՀ դրամ՝ գումարած հարկվող եկամտի 36%-ը
Եկամտահարկ վճարողներ՝ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ անհատների հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ:	

Շահութահարկի տարեկան դրույքաչափը սահմանվում է 20%:

Հարկատուներ. ՀՀ ռեզիդենտների (օրինակ՝ պետական գրանցում ունեցող կազմակերպություններ և պայմանագրային ներդրումային ֆոնդեր) և ոչ ռեզիդենտների հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ:

- Ռեզիդենտների համար՝ ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:
- Ոչ ռեզիդենտների համար՝ հայաստանյան աղբյուրներից ստացված ընդհանուր շահույթը:

Ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափերը

Շահույթի տեսակ	Հարկի դրույքաչափ
Ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5%
Գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից)	10%
Ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից տրամադրված այլ ծառայություններ, ինչպես նաև ոչ ռեզիդենտի ստորաբաժանման կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց ստացված եկամուտ	20%

Ավելացված արժեքի հարկի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ի վճարողներ՝ ընկերություններ, որոնց տարեկան շրջանառությունը գերազանցում է 115 մլն դրամը:

Ապրանքների արտահանումը և արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում (ԱՏԳ ԱԱ) ներառված որոշակի ապրանքների (հատկապես գյուղատնտեսության ոլորտում օգտագործվող ապրանքների) ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից:

Ակցիզային հարկ

Ակցիզային հարկ վճարողներ՝ ՀՀ-ում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակներն են գարեջուրը, գինիները (բացառությամբ՝ խաղողի գինենյութից ստացված կոնյակի սպիրտի), սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և այլն:

Շրջանառության հարկ

Շրջանառության հարկը (ՇՀ) անհատ ձեռնարկատերերի, առևտրային կազմակերպությունների համար ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող հարկ է: Շրջանառության հարկ վճարողներ են համարվում անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով

մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցել 115 մլն դրամը: Շրջանառության հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը, ինչպես նաև ստացվող այլ եկամուտները: Շրջանառության հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առևտրական գործունեությունից եկամուտներ	5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

Գույքահարկ՝ Հայաստանում գտնվող անշարժ գույքի կադաստրային գնահատման արժեքի 0,1- 0,8%-ը:

Ներմուծման հարկ՝ դրույքաչափերը սահմանվում են 0% կամ 10%՝ կախված ներմուծվող ապրանքի տեսակից:
Հարկվող օբյեկտ՝ ՀՀ մաքսային տարածքով փոխադրվող ապրանքներ:
Կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրեր ավելի քան 40 երկրների հետ:

Հատուկ հարկային ռեժիմներ

Սահմանամերձ համայնքների հարկում. Սահմանամերձ համայքներում գործունեություն իրականացնող անհատները, անհատ ձեռներեցները և կազմակերպություններն ազատվում են շրջանառության հարկից, եկամտահարկից, ԱԱՀ-ից կամ շահութահարկից: Բացառություն են կազմում ակցիզային հարկման ենթակա ապրանքները:

Ընտանեկան ձեռնարկատիրության հարկում. Բացառությունները տարածվում են նաև այն դեպքերի նկատմամբ, երբ ընտանիքի անդամները (ծնողը, ամուսինը, զավակը, եղբայրը) ստեղծում են ընտանեկան ձեռնարկատիրություն: Այդ դեպքում, ընտանեկան ձեռնարկատիրությամբ զբաղվող ընտանիքի անդամներն ազատվում են այդ գործունեության հետ կապված բոլոր տեսակի հարկերից: Ընտանեկան ձեռնարկատիրություն ստեղծելու իրավասություն ունեն միայն ՀՀ ռեզիդենտները: Ընտանեկան ձեռնարկատիրության շրջանառությունը հարկվող տարում չպետք է գերազանցի 18 մլն ՀՀ դրամը: Ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը վճարում է ընդամենը 5.000 դրամ՝ որպես եկամտահարկ:

Ազատ տնտեսական գոտիներ (ԱՏԳ)՝ ԱՏԳ-ում գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք ազատվում են ԱԱՀ-ից, շահութահարկից, գույքահարկից և մաքսային սակագներից:.

ԱԱՀ-ից ազատված որոշակի ապրանքներ. մանրէների ստերիլիզատորներ վիրաբուժության և լաբորատոր օգտագործման համար, որոշ այլ մանրէների ստերիլիզատորներ, ամանեղեն լվացող մեքենաներ, շշեր կամ այլ տարողություններ լվանալու սարքավորումներ, սարքավորումներ՝ շշեր և նման այլ տարողություններ լցնելու և խցանելու համար, տարբեր տեսակի ամբարձիչներ և վերհաններ, որոշ տեսակի բուլդոզերներ, գութաններ՝ հողը հերկելու համար, մամլիչներ, ջարդիչներ կամ նման սարքավորումներ, սարքավորումներ՝ թուղթ կամ նման ապրանքներ արտադրելու համար, որոշ տեսակի կարի մեքենաներ, որոշ տեսակի տպիչ սարքեր, կաշվի արտադրության սարքավորումներ, մեքենաներ՝ էլեկտրոնային լամպերի կամ այլ ապրանքների արտադրության համար, սիգարետների պարտաստման սարքավորումներ, էլեկտրական մեքենաներ և մեխանիկական հարմարանքներ:

Հարկերից ազատման գործողության ժամկետը կախված է հայտարարված ժամանակից և ապրանքների արժեքից

Գործողության ժամկետ	Մաքսային արժեք
1 տարի	< 70 մլն ՀՀ դրամ
2 տարի	70 մլն – 300 մլն ՀՀ դրամ
3 տարի	> 300 մլն ՀՀ դրամ

Հարկային արտոնություններ միկրո և փոքր ձեռնարկությունների համար

- ԱԱՀ-ից ազատում (տարեկան շրջանառությունը չի գերազանցում 115 մլն ՀՀ դրամը)
- Ընտանեկան ձեռնարկատիրության հարկային արտոնություն (ընտանիքի եկամուտը չի գերազանցում 18 մլն ՀՀ դրամը հարկային տարում)

Լիցենզիաներ և թույլտվություններ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են լիցենզիաների երկու տեսակներ՝ պարզ (պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ) և բարդ (բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ):

Լիցենզիայի տեսակը	Տրման տևողությունը
Պարզ	3 օր
Բարդ	30 օր

Լիցենզիաները կարող են տրամադրվել առցանց (www.e-gov.am/licenses).

«Մեկ պատուհանի», «հովանոցի» և «լռությունը համաձայնություն է» սկզբունքները բացակայում են լիցենզավորման մասին գործող օրենքում: Հայաստանում գործունեության որոշակի տեսակներ իրականացնելու համար պահանջվում է ստանալ լիցենզիաներ:

Շինարարության թույլտվություն

Ընդհանուր առմամբ, շինարարության թույլտվություն ստանալը տևում է 84 օր:

N	Ընթացակարգ	Տևողություն	Ծախսեր
1	Դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք	15 օր	անվճար
2*	Դիմել և ստանալ տեխնիկական պայմանների հաստատում Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերություններից	15 օր	անվճար
3*	Դիմել և ստանալ տեխնիկական պայմանների հաստատում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունից	3 օր	անվճար
4	Դիմել և ստանալ շինարարության թույլտվություն Երևանի Քաղաքապետարանից	15 օր	350.000 ՀՀ մարդ
5*	Ծանուցել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությանը շինարարական աշխատանքները սկսելու մասին	1 օր	անվճար
6	Ստուգում քաղաքապետարանի շինարարության վերահսկողության վարչության կողմից	1 օր	անվճար
7	Ստուգում ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից	1 օր	անվճար

8	Դիմել ջրամատակարարման և կոյուղու ծառայություններից օգտվելու համար. ջրի և կոյուղու ստուգում և միացում	9 օր	2.600 ՀՀ մարդ
9	Ներկայացնել շինարարական տեղեկամատյանը քաղաքապետարանին և դիմել տարածքը զբաղեցնելու թույլտվություն ստանալու համար	1 օր	անվճար
10*	Ծանուցել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը շինարարական աշխատանքների ավարտի մասին	1 օր	անվճար
11	ՀՀ քաղաքաշինության նախարարության վերջնական ստուգում	1 օր	անվճար
12	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության վերջնական ստուգում	7 օր	անվճար
13*	Քաղաքապետարանի վերջնական ստուգում	1 օր	անվճար
14	Ստանալ շինության զբաղեցման թույլտվություն քաղաքապետարանից	28 օր	100.000 ՀՀ մարդ
15	Շինության գրանցում կադաստրում	2 օր	127.332 ՀՀ մարդ
16*	Տեղում ստուգում՝ շինության գրանցման համար	1 օր	200.000 ՀՀ մարդ
	* Տեղի է ունենում այլ ընթացակարգերի հետ միաժամանակ:		

Առևտուր

Արտոնյալ առևտրային ռեժիմներ

- Ազատ առևտրի համաձայնագիր (ԱԱՀ) ԱՊՀ երկրների հետ
- Առևտրի համաշխարհային կազմակերպության ամենաբարենպաստ ազգային ռեժիմներ
- Անդամակցություն Եվրասիական տնտեսական միությանը
- Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP և GSP +)
- Արտահանումս ազատված է հարկից և չկա լիցենզավորման պահանջ
- Հայաստանը ներկայացրել է «մեկ պատուհան» գործընթացը՝ ծագման երկրի կանոնների կիրառման համար: Սերտիֆիկատ ստանալու համար ձեռնարկատերը պետք է դիմի ՀՀ առևտրարդյունաբերական պալատի «Էքսպերտիզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Ներմուծման լիցենզիաներ և թույլտվություններ

Հայաստանում ներմուծման սահմանափակումները ներառում են թույլտվություն ստանալու պահանջ հետևյալ ապրանքատեսակների ներմուծման մասով՝ դեղագործական ապրանքներ և դեղեր, ֆիտոպաշտպանական քիմիկատներ և բուժանյութեր, զենքեր, զենքի արտադրության համար օգտագործվող բաղադրիչներ, պայթուցիկներ, միջուկային նյութեր, թույներ, թմրանյութեր, ուժեղ հոգեմետ նյութեր, ափիոն ծխելու սարքեր, պոռնոգրաֆիկ նյութեր:

- Դեղերի ներմուծման թույլտվությունը տրամադրում է ՀՀ առողջապահության նախարարությունը:
- Գյուղատնտեսական քիմիկատների ներմուծման թույլտվությունը տրամադրում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:
- Զենք/զինամթերքի և որոշ ռազմական տեխնիկայի/սարքավորումների ներմուծման թույլտվությունը տրամադրում է ՀՀ պաշտպանության նախարարությունը:
- Որոշ քիմիական ապրանքներ և անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի ու կենդանիների տեսակների ներմուծման թույլտվությունը տրամադրում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը տրամադրում է երեք տեսակի թույլտվություններ/սերտիֆիկատներ

- Անասնաբուժական սերտիֆիկատ ապրանքների ներմուծման կամ տարանցիկ փոխադրման համար
- Ֆիտոսանիտարական սերտիֆիկատ ապրանքների ներմուծման համար
- Սննդամթերքի անվտանգության սերտիֆիկատ ապրանքների ներմուծման համար

Արտահանման լիցենզիաներ և թույլտվություններ

- Արվեստի գործերի և մշակութային նշանակություն ունեցող այլ ապրանքների դուրս հանումը երկրից պետք է ուղեկցվի ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրամադրված արտահանման թույլտվության փաստաթղթով:
- Դեղերի արտահանումը պետք է թույլատրվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից:
- Գյուղատնտեսական քիմիկատների արտահանումը պետք է թույլատրվի ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:
- Զենք/զինամթերքի և որոշ ռազմական տեխնիկայի/սարքավորումների արտահանումը պետք է թույլատրվի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:
- Որոշ քիմիական ապրանքների և անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի ու կենդանիների տեսակների արտահանումը պետք է թույլատրվի ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Թույլտվության տեսակը	Հսկողության ենթակա ապրանքը	Թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը	Թույլտվության գործողության ժամկետը
Անասնաբուժական հսկողությանը ենթակա որոշ ապրանքների ներմուծման և տարանցիկ փոխադրման թույլտվություն	Կենդանիներ, կենդանական ծագում ունեցող ապրանքներ և հումքեր (մորթի, բմբուլ, փետուր, էնդոկրին և աղեստամոքսային նյութեր, արյուն, ոսկորներ), անասնակեր և կերային խառնուրդներ, կենդանական ծագման հավաքածու	Դիմումի փաթեթը պետք է ներառի հետևալ տեղեկությունները՝ արտահանողի անունը, բնակության վայրը. իրավաբանական անձի դեպքում՝ ընկերության լրիվ անվանումը, հասցեն, ներմուծող երկիրը, ստացող կողմի անվանումը և հասցեն (եթե իրավաբանական անձ է), լրիվ անունը և գտնվելու վայրը, արտահանվող ապրանքների անվանումը և քանակը, ստացման վայրը:	5 օր
Ֆիտոսանիտարական հսկողությանը ենթակա որոշ ապրանքների ներմուծման թույլտվություն	Գյուղատնտեսական, անտառային և դեկորատիվ բույսերի սերմեր, տնկիներ, բողբոջներ, պալարներ, թարմ և չոր միրգ և բանջարեղեն, հացահատիկ, այլուր, ցորեն, ծխախոտի հումք և համեմունքներ, անտառանյութ և այլն:	Դիմումի փաթեթը պետք է ներառի հետևալ տեղեկությունները՝ ներմուծող երկիրը, ապրանքի քաշը և արտահանման տնողությունը:	14 օր

Վրաստան

Տնտեսվարող սուբյեկտների գրանցում

- Գրանցող մարմին՝ Արդարադատության նախարարությանը կից Պետական ռեգիստրի ազգային գործակալություն (ՊՌԱԳ)
- Տնտեսվարող սուբյեկտների գրանցման համար պահանջվում է միայն մեկ օր
- Գրանցման առցանց հաստատում

Վրաստանում տնտեսվարող սուբյեկտների տեսակներ

- Անհատ ձեռնարկատեր
- Համատեղ պատասխանատվությամբ ընկերակցություն
- Տնտեսական ընկերակցություն
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- Բաժնետիրական ընկերություն և արտադրական կոոպերատիվ

Գրանցման վարձ

Տնտեսվարող սուբյեկտի տեսակ	Գրանցման վարձ (լարի)	
	Մեկ աշխատանքային օրվա ընթացքում	Անմիջապես (նույն օրվա ընթացքում)
Անհատական ձեռնարկություն	20 լարի	50 լարի
Համատեղ պատասխանատվությամբ ընկերակցություն	100 լարի	200 լարի
Տնտեսական ընկերակցություն	100 լարի	200 լարի
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	100 լարի	200 լարի
Բաժնետիրական ընկերություն	100 լարի	200 լարի
Արտադրական կոոպերատիվ	100 լարի	200 լարի

Ընկերության գրանցմանն ուղղված քայլեր

Անհատ ձեռնարկատեր՝ անձը հաստատող փաստաթուղթ և դիմում (անուն-ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համար, ստորագրություն, հասցե և դիմումի ներկայացման ամսաթիվ):
Իրավաբանական անձ՝ բոլոր գործընկերների կողմից ստորագրված դիմում: Դիմումի մեջ պետք է նշվեն.

- նորաստեղծ ընկերության անվանումը, իրավական ձևը և իրավաբանական հասցեն,

- ընկերության ղեկավար մարմինը և տեղեկություններ գործընկերների կամ տնտեսական ընկերակիցների վերաբերյալ՝ ՍՊԸ-ի կամ տնտեսական ընկերակցության պարագայում,
- ընկերության անվանումը, հասցեն և դրա ղեկավարների անձը հաստատող փաստաթղթերի համարները:

Օտարերկրյա ընկերության մասնաճյուղի հիմնում

- Ձեռնարկության ղեկավարության որոշումը մասնաճյուղ ստեղծելու մասին,
- ձեռնարկության կամ մասնաճյուղի կանոնադրության մեկ օրինակ,
- մասնաճյուղի տնօրենի նշանակման կամ նրան լիազորություններ տրամադրելու մասին որոշումը, ինչպես նաև վերջինիս անձնագրի պատճենը:

Անշարժ գույքի փոխանցում

Անշարժ գույք գնելու համար հարկավոր է.

- Ներկայացնել (նոտարի կողմից) վավերացված փաստաթուղթ, որում նշվում է սեփականության իրավունքը, ինչպես նաև քաղվածք գնորդի գրանցման մասին:
- Վաճառողը և գնորդը նույնպես կարող են գրանցման մասին դիմում ներկայացնել:
- Գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականության իրավունքը տրվում է Վրաստանի քաղաքացիներին և մասնավոր իրավաբանական անձանց՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկային հաշվի բացում

- Վրաստանի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ անձինք կարող են բացել և տնօրինել ցանկացած հաշիվ՝ ինչպես ազգային արժույթով, այնպես էլ ցանկացած այլ տարադրամով:

- Բանկային հաշվի բացման համար համապատասխան կազմակերպություններն ու անձինք պարտավոր են ներկայացնել ՊՐԱԳ-ում կամ հարկային մարմիններում իրենց գրանցումը հաստատող փաստաթուղթ:

Հարկային համակարգ

Անձնական եկամտահարկի միասնական դրույքաչափը կազմում է 20%:
Հարկատու են համարվում ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ անձինք, ընդ որում հարկվում է միայն Վրաստանում գտնվող աղբյուրներից նրանց ստացված եկամուտը:

Շահութահարկի միասնական դրույքաչափը կազմում է 15%:
Հարկատու են համարվում՝ Վրաստանում և արտերկրում գրանցված իրավաբանական անձինք, որոնք եկամուտ են ստանում Վրաստանում գտնվող աղբյուրներից կամ Վրաստանում գտնվող իրենց ներկայացուցչության միջոցով իրականացվող գործունեությունից:

Վրաստանում գտնվող աղբյուրներից ստացված եկամուտ	Հարկի ընթացիկ դրույքաչափ
Շահաբաժին	5%
Տոկոսային եկամուտ	5%
Նավթագազային ոլորտի ենթակապալառուներ	4%
Միջազգային հեռահաղորդակցման և փոխադրման ծառայություններ	10%
Հեղինակային հոնորար	10%
Կառավարման վարձավճար	10%
Աշխատավարձի տեսքով ստացված եկամուտ	20%
Վրաստանում գտնվող եկամտի աղբյուրներից ոչ ռեզիդենտ անձանց օգտին կատարված վճարումներ, որոնք կապված չեն Վրաստանում վերջիններիս մշտական ներկայացուցչության հետ	10%

Ավելացված արժեքի հարկ՝ 18%

- Հարկատու են համարվում այն ընկերությունները, որոնց տարեկան շրջանառությունը գերազանցում է 100.000 լարին:
- Գոյություն ունեն այս հարկից ազատված գործարքների երկու տեսակ՝ մուտքային ԱԱՀ-ի իրավունքով և առանց մուտքային ԱԱՀ-ի իրավունքի: Ապրանքների արտահանումն ազատվում է այս հարկից մուտքային ԱԱՀ-ի իրավունքներով, մինչդեռ որոշ տեսակի դեղորայքի, մարդատար ավտոմեքենաների, հրապարակումների, զանգվածային լրատվամիջոցների և մանկահասակ երեխաների համար նախատեսված առարկաների ներկրումն ազատվում է այս հարկից առանց մուտքային ԱԱՀ-ի իրավունքների:

Ակցիզային հարկ՝ Հարկատու են համարվում բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք արտադրում են ակցիզային ապրանքներ Վրաստանի տարածքում, կամ էլ ներկրում են ակցիզային ապրանքներ:
Գույքահարկ՝ Վրաստանում գտնվող գույքի արդար շուկայական արժեքի 0,05-ից 1%-ը՝ կախված <u>տվյալ անձի</u> տարեկան եկամտի չափից: <u>Իրավաբանական անձինք</u> հարկ են վճարում գույքի հարկվող արժեքի մինչև 1%-ի չափով:
Ներկրման հարկ՝ Դրույքաչափերը կազմում են՝ 0,5 կամ 12 տոկոս՝ կախված ներկրվող ապրանքի տեսակից:
Հարկի առարկա՝ Վրաստանի մաքսային համակարգի միջոցով փոխանցվող ապրանքներ:
Կրկնակի հարկավորման մասին պայմանագրեր՝ Գործում են պայմանագրեր ավելի քան 50 երկրների հետ:

Հատուկ հարկային ռեժիմներ

Հատուկ առևտրային ընկերություն

Օտարերկրյա անձ, որն իրականացնում է իր տնտեսական գործունեությունը Վրաստանում իր մշտական ներկայացուցչության միջոցով, իրավունք ունի ստանալ Հատուկ առևտրային կազմակերպության կարգավիճակ և գրանցել առանձին մշտական ներկայացուցչություն միայն այդ դեպքերում, երբ վերջինիս մշտական

ներկայացուցչությունն իրականացնում է Հարկային օրենսգրքով նախատեսված Հատուկ առևտրային ընկերության գործունեություն: Հատուկ առևտրային ընկերությունն ազատվում է շահութահարկից:

Միջազգային ֆինանսական ընկերություն

Ֆինանսական հաստատություն, որն իր լիազոր ներկայացուցչի դիմումի հիման վրա ստանում է Միջազգային ֆինանսական կազմակերպության կարգավիճակ: Քանի որ Միջազգային ֆինանսական ընկերությունների հիմնական նպատակն օֆշորային ընկերությունների հնարավորինս ցածր ծախսերով սպասարկումն է, ուստի նման ընկերություններն օգտվում են որոշ հարկերի ազատումից՝ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

Տուրիստական ձեռնարկություն

Իրավաբանական անձը, որը կառուցում է հյուրանոցներ, մատակարարում է հյուրանոցային ակտիվներ կամ ակտիվների մասեր մեկ այլ անձին վարձի տեսքով եկամուտներ ստանալու համար, կամ էլ որպես հյուրանոցներ շահագործում է շենքեր՝ Վրաստանի օրենսդրությամբ տուրիստական ձեռնարկությունների համար սահմանված կարգով: Տուրիստական ձեռնարկություններն օգտվում են որոշակի հարկերի ազատումից՝ Հարկային օրենսգրքում սահմանված կարգով:

Ազատ արդյունաբերական գոտի

Նման գոտում առաջարկում են ընդլայնված հարկային արտոնություններ, ինչպես նաև նախատեսվում է պարզեցված աշխատակարգ այնտեղ գտնվող ընկերությունների համար: Ազատ արդյունաբերական գոտում գրանցված տնտեսվարող սուբյեկտներն օգտվում են ավելի ցածր հարկերից, ինչպես նաև տրանսպորտային միջանցք մուտք գործելու դյուրացված հնարավորությունից:

Միկրո և փոքր ձեռնարկություններ

Միկրո ձեռնարկություններ	Փոքր ձեռնարկություններ
Ինչպե՞ս է շնորհվում համապատասխան կարգավիճակը:	
Միկրո ձեռնարկության կարգավիճակը շնորհվում է այն ֆիզիկական անձանց, ովքեր իրականացնում են անկախ տնտեսական գործունեություն, և ում ընդհանուր տարեկան եկամուտը չի գերազանցում 30.000 լարին:	Փոքր ձեռնարկության կարգավիճակը շնորհվում է այն անհատ ձեռնարկատերերին, ովքեր իրականացնում են անկախ տնտեսական գործունեություն, և ում ընդհանուր տարեկան եկամուտը չի գերազանցում 100.000 լարին:
Ինչպե՞ս է իրականացվում միկրո և փոքր ձեռնարկությունների հարկավորումը:	
Միկրո ձեռնարկությունները լիովին ազատվում են եկամտահարկից: Նրանք պարտավոր չեն օգտագործել հսկիչ-դրամարկղային մեքենա՝ բացառությամբ կառավարության կողմից ամրագրված հատուկ տնտեսական գործունեության դեպքերի:	Փոքր ձեռնարկություններից գանձվում է եկամտահարկ 5% դրույքաչափով: Հարկի դրույքաչափը կազմում է 3%, եթե. - ձեռնարկությունը հաստատում է, որ իր կրած ծախսերը կազմում են դրա ընդհանուր եկամտի 60 %-ը, - տնտեսական գործունեությունն իրականացվում է հատուկ առևտրային գոտում:

Միկրո ձեռնարկություններին արգելվում է զբաղվել հետևյալ տեսակի գործունեությամբ.

- արտոնագրերով կամ թույլտվություններով իրականացվող գործունեություն,
- տարադրամի փոխանակում,
- բժշկական, ճարտարապետական, նոտարական, իրավաբանական և աուդիտային գործունեություն,
- դրամախաղերի կազմակերպում,
- առևտուր (բացառությամբ այն դեպքերի, երբ իրականացվում է գնված ապրանքի մշակում և մատակարարում):

Արտոնագրեր և թույլտվություններ

ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔ Համապատասխան արտոնագիր կամ թույլտվություն տվող գերատեսչությունը պարտավոր է ինքը հավաքագրել համապատասխան տեղեկությունները տարբեր պետական մարմիններից:

ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ Օրենքով սահմանված են հետևյալ ժամկետային սահմանափակումները՝ Արտոնագրի շնորհման մասին որոշման դիմում ներկայացնելու պահից 30 օր, իսկ թույլտվության տրամադրման մասին դիմումի ներկայացման պահից՝ 20 օր:

ԿԱՆՈՆ «ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ Է» Եթե համապատասխան գերատեսչությունը չի պատասխանում օրենքով սահմանված ժամկետներում, ապա տվյալ արտոնագիրը կամ թույլտվությունը համարվում է ինքնաբերաբար շնորհված:

«ԱՆՁՐԵՎԱՆՈՅԻ ՍԿԶԲՈՒՆՔ» Մտցվել են ընդհանուր բնույթի և մասնագիտացված արտոնագրեր, ընդ որում ընդհանուր բնույթի արտոնագիր հանդիսացող պահառուն պարտավոր չէ դիմել նաև մասնագիտացված արտոնագրի ստացման համար:

Վրաստանում գործնականում կիրառվում են որևէ գործունեության իրականացման և որևէ գույքի օգտագործման համար տրվող արտոնագրեր:

Շինարարության թույլտվություն

Թույլտվության ստացման համար պահանջվում է անցնել երեք փուլով.

Փուլ 1-ին՝ շինարարության պայմանների սահմանում շինարարության նպատակով հողօգտագործման պայմանների հաստատման մասին պահանջվող փաստաթղթերով կից դիմում ներկայացնելու ամսաթվից 15 օրվա ընթացքում:
Փուլ 2-րդ՝ ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցում 20 օրվա ընթացքում:
Փուլ 3-րդ՝ թույլտվության տրամադրում 10 օրվա ընթացքում:

Գոյություն ունեն որոշ բացառություններ այս կանոնից հատուկ նշանակության շենքերի պարագայում, երբ պահանջվում է ավելի երկար ժամանակահատված, սակայն 60 օրից ոչ ավել: Թույլտվությունները բոլոր շենքերի և շինությունների համար տրվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Առևտրային գործունեություն

Արտոնյալ առևտրային ռեժիմ

- ԱՀԿ-ի երկրի առավելագույն բարենպաստման ռեժիմ:
- Ազատ առևտրի մասին պայմանագրեր (ԱԱՊ) ԵՄ-ի, ԱՊՀ երկրների և Թուրքիայի հետ:
- Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP)՝ ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Շվեյցարիա և Նորվեգիա:
- Վրաստանի օրենսդրությամբ ամրագրված չեն միջազգային առևտրի ոչ դրույքաչափային սահմանափակումներ (արգելք, արտոնագրում) բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը գնում է

առողջության, ապահովության, անվտանգության և բնապահպանական հարցերի մասին:

- Վրաստանում արտահանումն ու վերաարտահանումն ազատված են հարկերից:
- Որոշ երկրներ արտահանելու համար պահանջվում է ծագման վկայական: Ծագման վկայականները տրվում են Տնտեսության և կայուն զարգացման նախարարության, Հարկային ծառայության, Աջարիայի Ինքնավար Հանրապետության Ֆինանսների և տնտեսության նախարարության, ինչպես նաև Առևտրի և արդյունաբերության պալատի կողմից: Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու՝ ԽՀԱԱ-ի շրջանակներում արտահանվող ապրանքների համար ծագման վկայականը տրվում է միայն Հարկային ծառայության կողմից:

Արտահանման արտոնագրեր և թույլտվություններ

- Էլեկտրոնային հսկման սարքերի արտահանման թույլտվությունը տրվում է Ներքին գործերի նախարարության կողմից:
- Որոշ քիմիական արտադրանքի արտահանման թույլտվությունը տրվում է Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանության նախարարության կողմից:
- Երկակի նշանակության ապրանքների արտահանման թույլտվությունը տրվում է Տնտեսության և կայուն զարգացման նախարարության կողմից:
- Զենքի և զինամթերքի, ինչպես նաև որոշակի ռազմական սարքավորումների արտահանման թույլտվությունը տրվում է Պաշտպանության նախարարության կողմից:
- Հատուկ հսկողության ենթակա բժշկական արտադրանքի արտահանման թույլտվությունը տրվում է Աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարությանը կից Բժշկական գործունեության կարգավորման պետական գործակալության կողմից:
- Կենդանական և բուսական աշխարհի անհետացող տեսակների արտահանման թույլտվությունը տրվում է Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանության նախարարության կողմից:
- Մշակութային արժեք ունեցող առարկաների արտահանման թույլտվությունը տրվում է Վրաստանի Մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարության կողմից:

Ներկրման արտոնագրեր և թույլտվություններ

- Էլեկտրոնային հսկման սարքերի ներկրման թույլտվությունը տրվում է Ներքին գործերի նախարարության կողմից,
- Անասնաբուժական, սանիտարական և ֆիտո-սանիտարական հսկողության ենթակա արտադրանքի ներկրման թույլտվությունը տրվում է Ազգային պարենային գործակալության կողմից,
- Որոշ քիմիական արտադրանքի ներկրման թույլտվությունը տրվում է Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանության նախարարության կողմից,
- Երկակի նշանակության ապրանքների ներկրման թույլտվությունը տրվում է Տնտեսության և կայուն զարգացման նախարարության կողմից,
- Զենքի և զինամթերքի, ինչպես նաև որոշակի ռազմական սարքավորումների ներկրման թույլտվությունը տրվում է Պաշտպանության նախարարության կողմից,
- Հատուկ հսկողության ենթակա բժշկական արտադրանքի ներկրման թույլտվությունը տրվում է Աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարությանը կից Բժշկական գործունեության կարգավորման պետական գործակալության կողմից:
- Կենդանական և բուսական աշխարհի անհետացող տեսակների ներկրման թույլտվությունը տրվում է Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանության նախարարության կողմից,
- Ոչ յոդավորված աղի ներկրման թույլտվությունը տրվում է Գյուղատնտեսության նախարարության և Աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Ազգային պարենային գործակալությունը տալիս է երկու տեսակի թույլտվություն.

- Անասնաբուժական վերահսկողության ենթակա որոշ արտադրանքի ներկրման և տարանցիկ փոխադրման թույլտվություն:
- Ֆիտո-սանիտարական վերահսկողության ենթակա որոշ արտադրանքի ներկրման թույլտվություն:

Թույլտվության տեսակ	Վերահսկողության ենթակա արտադրանք	Թույլտվության ստացման համար պահանջվող փաստաթղթերի ցանկ	Թույլտվության գործողության ժամկետը
Անասնաբուժական վերահսկողության ենթակա որոշ արտադրանքի ներկրման և տարանցիկ փոխադրման թույլտվություն	Անասուններ, կենդանական ծագման արտադրանք և հումք, անասնակեր (կերի հավելումներ), ինչպես նաև անասնաբուժական նպատակներով օգտագործվող կենսաբանական, բժշկական և քիմիադեղագործական արտադրանք	▪ Դիմում ▪ Թույլտվության ստացման համար մուծումը հաստատող հաշիվ-ապրանքագիր ▪ Անասնաբուժական հավաստագրում ▪ Քաղվածք պետական ռեգիստրից	1 ամիս
Ֆիտո-սանիտարական վերահսկողության ենթակա որոշ արտադրանքի ներկրման թույլտվություն	Ֆիտո-սանիտարական կարանտինի ենթակա արտադրանք, ինչպես նաև առարկաներ, որոնք կարող են առաջացնել կարանտինի ենթակա նյութերի տարածում	▪ Դիմում ▪ Թույլտվության ստացման համար մուծումը հաստատող հաշիվ-ապրանքագիր ▪ Անասնաբուժական հավաստագրու ▪ մՔաղվածք պետական ռեգիստրից	6 ամիս

Project is co-funded by the European Union

Peace Corps

german cooperation DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

EaPTC Eastern Partnership Territorial Cooperation

«Միջսահմանային տնտեսական զարգացում» (CED) ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրամիության կողմից՝ «Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային Համագործակցություն» (EaPTC) ծրագրի շրջանակներում:

«Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային Համագործակցություն» (EaPTC) ծրագիրն Արևելյան Գործընկերության երկրներին հնարավորություն է տալիս սահմանակից տարածաշրջաններում բացահայտել ընդհանուր մարտահրավերներ և առաջարկել դրանց հաղթահարմանն ուղղված միասնական լուծումներ, որոնք տեղական մակարդակում կապահովեն տնտեսական և սոցիալական զարգացում:

«Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային Համագործակցություն» (EaPTC) ծրագիրն իր մեջ ներառում է չորս տարածաշրջանային համագործակցության ծրագրեր:

CiDA we connect

COMMUNITY CENTER FOR DEVELOPMENT

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Ծրագիրն իրականացնում է վրացական «Քաղաքացիական զարգացման գործակալություն» հկ-ն (CiDA), հայկական «Քմունիթի Սենթր ֆոր Դիվելըփմընթ» Տարածաշրջանային Համագործակցության հկ- ի (CCD) և «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի» (EPF NB) հետ համատեղ:

Այս բրոշյուրը հրատարակվել է Եվրոպական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Խաղաղության Կորպուսի ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Քաղաքացիական զարգացման գործակալություն» (CiDA) հկ-ն՝ իր գործընկերների հետ միասին, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրամիության տեսակետները:

Կոնտակտներ

«Քաղաքացիական զարգացման գործակալություն» հկ (CiDA) Պիրոսմանի փողոց 9/1,
3700, ք. Ռուսթավի, Քվեմո Քարթլի շրջան, Վրաստան
+ 995 592 92 64 64
+ 995 341 25 88 24
+ 995 341 24 24 34
www.cida.ge
ced@cida.ge

Քմյունիթի Սենթր ֆոր Դիվելըփմընթ (CCD)
Երևանյան փ. 3, 4101, ք. Նոյեմբերյան, Տավուշի մարզ, Հայաստան
+ 37426 663286
+ 37491 783283
www.tavushcf.am
h.azibekyan@gmail.com

Եվրասիա համագործակցություն հիմադրամի հյուսիսային մասնաճյուղ (EPF NB)
Անկախության 60, 4001, ք. Իջևան, Տավուշի մարզ, Հայաստան
+ 37495 251563
www.epfarmenia.am
info-epf@epfound.am

www.facebook.com/CEDproject
www.facebook.com/groups/1020858794642498